Երկրորդ՝ զխնդիրդ համեստ և Աստուածահաճոյ, զոր բաղձայ Եղբայրութիւնդ ինև լնանիլ, այս է. զի թարգմանիցեմ զԸնթացն Աստուածաբանական, ի վճտաբղխից աղբերց Վարդապետացն Հռոմէականաց, որով մարթայցէ ներհմտացուցանել զիւրս ստորադրեցեալս առ լաւագոյն ընձեռումն Առաքելականի Պաշտաման։ Արդարև խնդիր սուրբ և ամենագովելի, բայց անհանգէտ իմոցս ուսոց՝ բեռն։ Նախ, զի իրականութիւնդ այդ, պահանջէ զգիտութիւն և զծանօթութիւն մեծ երկոցունց լեզուաց, զոր ես չունիմ բաւականապէս։ Երկ. զառողջութիւն և զամբողջութիւն, որք այժմ ոչ գտանին յիս, գոլով իմ արդ պակասեցեալ յուժոյ և ի լուսոյ, և գրեթէ ծիւրեցեալ ի ծերութենէ և գործարանքս անպիտանացեալք. խնդրելի է ուրեմն ի գիտնականից և մանկագունից քան զիս։ Այլ ընդէ՞ր և այս. ո՞չ ապաքէն Իմաստասիրութիւն և Աստուածաբանութիւն Հրեշտակականի Վարդապետին Ագուինացւոյ վաղ ուրեմն թարգմանեցեալք գտանին այժմ ի մէջ Ուղղափառացն Ճահկեցւոց։ Խնդրեսցէ Եղբայրութիւնդ ի նոցանէ և նոքա (որպէս ենթադրեմ) չեն զլանալոցք. մանաւանդ մինչ լսիցեն հանդերձեալ գոլ տպագրութեամբ ի յոյս ածիլ, որպէս խոստանասդ։ Գտանի առ իս ընդօրինակեցեալ Բնաբանութիւն, այսինքն Ֆիզիքա, մասն ինչ ի Կղէմայ, բարւոյ յիշատակի Վարդապետէն, և մասն յԱլիոզէ արարեցելոցն. եթէ յօժարիցի Եղբայրութիւնդ՝ յղեցից, յորժամ դարձայց յաքսորանաց աստի ի Լէսպոլիս։...

Մնամ խոնարհագունեղ ծառայ
Վարդան Արքեպս. Լէսպոլսոյ

Բ.

Յաջորդ թուղթը որուն աշխարհաբար թարգմանութիւնը կայ Հ. Յ. Թորոսեանի Վարք Մխիթար Աբբայի գրոց մէջ, գրուած է ի Վենետիկ ի չորրորդում օգոստոսի 1708 ձեռամբ Խաչատուր վարդապետի Երզրումեցիի։ Ի մէջ այլոց կը հաղորդէ Մխիթար Աբբայի որ ինք (Խաչատուր Վ.) առաքելական քարոզիչ կարգուեր է Ս. Ժողովէն։ Ահա ամբողջութեամբ.

Սիրելագունեղ Եղբայր իմ ի Տէր.

Սիրելագունեղ մայր մեր հանդերձ երկու թոռամբք եկեալ էհաս ի մայրաքաղաքս Վենետիկ, և պատմեաց մեզ զամենայն մարդասիրութիւն ձեր, զոր ցուցեալ էր նմա եղբայրութիւն ձեր. և աստ ի Վենետիկ բնակի հանդերձ թոռամբք և այլովք անձամբք. և է աստ մնալոց...։ Եւ ես մնացի աստ, և ստեղծայ ի Սուրբ Ժողովոյն Առաքելական միսսոնար Հայոց աստ եղելոց, ըստ խնդրոյ սիրելագունեղի եղբօր Գրիգոր Վարդապետի Թախաթեցւոյ, որ այլ ուրեք սահմանեաց գնալ։ Ի յեկեղեցւոջ Հայոց ի շաբաթն երիցս քարոզեմ...

Եղբայրութեան ձերոյ
ջերմեռանդագունեղ ծառայ
Խաչատուր վարդապետ Էրզրումեցի

Ի Վենետիկ ի չորրորդում օգոստոսի 1708

Գ.

Հետաքրքրական է նաև հետևեալ անտիպ գիրը, ոչ միայն իր մէկ երկու ազգային պատմական անցքերուն, այլ նոյն իսկ նամակագրին առ Մխիթար և իր